



62. ԻՄԱՍՏՈՒՆ ՂԱԶԱՐ

Մին շատ աղքադ մարթ ա ինոնմ, անումը Ղազար: Էտ Ղղարին օխտը քուր ա ինոնմ: Ախքադ Ղազարը միշտ քյինամ ար ըիւրդոթուն անում, պիրում քուլերքը պահում:

Մին օր էլ Ղազարը վրեր ա ինգլոնմ, մըեռնում: Քուլերքը մնամ ըն անդար, ըսկսում ավմեն օր լաց ինիլը: Վրեր շատ լաց ըն ինոնմ, Թրիստոսը տահանց սասն ըսկանում ա, ասում.—Լաց միքյ ինիլ, Ղղարին ետ պիրիլական ըմ տոն: Քյինամ ա հինգյիստըրանեն ղրազեն վրեննը կենում, ծեն տամ, թա Ղազար, տոնս եք, քյինա տոն: Էտ հինգյիստըրանումը հիշքան Ղազար ընումավ մարթիքյ ըն ինոնմ, լոխ տոնս ըն կյամ, վրեննը կենում: Թրիստոսը թա՝ ես ախքադ Ղղարին ըմ ասում, թող մենակ նա տոնս կյան:

Ախքադ Ղազարը տոնս ա կյամ, արտեն փոխված, իմաստուն տըեռած, քյինամ ուրանց շենը: Մինչև տոն հսնելը նի յա մննում մին դամուրչիխանա, տըեսնում մին շատ զաշանգյ ախնճիգյ ուրան հրսընքեն հետե զակագ տուված լավ, թինգյական շմուշկնեն կյեցած, տոնս ա կյամ, վրեր քյինա տոն: Հվաքված մարթիքյ լոխ ասում ըն:—Տըես հինչ լավ, զաշանգյ, բախտավրեր ախնճիգյ այե՛, ներակ սրա տըեռնը: Ղազարը թա շէ՛, քյանբախտ ախնճիգյ ա, հրսանեթյը վրեր ըսկսվե, ինքյը մըոնըլական ա: Ախնճիգյը հենց վրեր հանում ա տոն, հրսանեթյն ըսկսվում ա, ինքյը մըեռնում ա: